Անձին ներկայութեամբ դեկտեմբերի 9-ին յօբելեանական հանդէսը։

Համբուրելով Հայրապետական Օծեալ Աջոյդ՝ մնամ Ձերոյին Վեհափառութեան ամենախոնարհ որդի՝

Ի դիմաց Յօբելենական Յանձնաժողովի

Նախագահող անդամ Նորին Սs. Մամիկոնեան

1914 թ. մայիսի 26

Մոսկուա.

ԱԼԵՔՍԱՆԴՐ Ա. ԿԱՅՍԵՐ ԱՐՁԱՆԻ ՎՐԱՅ ԴՐՈՒԱԾ ՊՍԱԿԸ ԳԷՈՐԳ Ե. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Բեսսարաբիայի Քիշնեւ քաղաքում կատարուել է յունիսի 3-ին Ալէքսանդր Ա. կայսեր արձանի բացման հանդէսը, և Վեհափառ Հայրապետի կողմից նոյն թեմի առաջնորդ Գեր. Տ. Ներսէս արքեպիսկոպոսը դրել է արծաթեայ պսակ, որի առթիւ առաջնորդն ուղարկել է Վեհափառին հետեւեալ խոնարհ յայտարարութիւնը.

Նորին Վեհափառութեան Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց

Յառաջնորդէ թեմին Նոր-Նախիջեւանի եւ Բեսսարաբիոյ

Խոնարհ յայտարարութիւն

Վեհափառ Հովուապետիդ տարւոյս Մայիս 14-ի հեռագրական պատուէրի համաձայն պարտք էր դրւում մեզ վերայ լինել ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹԵԱՆ ներկայացուցիչ, Քիշնեւում Մայիսի 16-ին, Աղէքսանդր Ա. կայսեր արձանի հանդիսաւոր բացման ժամանակ և պսակ դնել յանուն ՏԵԱՌՆԴ։

Մայիսի 16-ին հանդէսը տեղի չունեցաւ, որովհետև Կայսերական բարեհաճ կամքով հանդէսը յետաձգուեցաւ Յունիսի 3-ին։

Յունիսի 3-ին Ն. Կ. ՄԵԾՈՒԹԻՒՆ ՆԻԿՈԼԱՅ Բ. բարեհաճեց ժամանել քաղաքս, ԿԱՅՍՐՈՒՀՈՒ, Օգոստափառ ԺԱՌԱՆԳԻ և Կայսերական Ընտանիքի հետ և ԻՒՐ ներկայութեամբ կատարուելով արձանի բացումը, բազդ ու-

նեցայ Ն. Կ. ՄԵԾՈՒԹԵԱՆ ներկայութեամբ գնել, յանուն Սրբազնակատար ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏԻԴ Եկեղեցւոյս, արծաթեայ պսակ,—շքեղ և արժէքաւոր։

Պսակը կազմում է մի մեծ ոսկեզօծ—արծաթ թաչ, 3/4 արշին բարձրութեամբ, որի տակը փռուած արծաթեայ արմաւենու մի մեծ և լայն ճիւղ, և երկու կողմից ընդ մէջ առած մրտենու և կաղնու արծաթէ թաւ ոստերով, ոսկեզօծ ելունդներով ու կաղիններով, ամբողջը պսակուած, վերևից Կայսերական ոսկեզօծ թագով և մենագրով (Ա. Ա.) ամբողջը գեղեցիկ և արուեստաւոր համադրութեամբ, իսկ արծաթ ժապաւէնի վերայ ոսկէ, բարձրաքանդակ տառերով գրուած.—

ИМПЕРАТОРУ
АЛЕКСАНДРУ I БЛАГОСЛОВЕННОМУ
ВЕЛИКОМУ ПОКРОВИТЕЛЮ
АРМЯНСКОЙ ЦЕРКВИ И НАРОДА

Отъ Главы Армянской Апостольской Церкви
ГЕОРГА V
ВЕРХОВНАГО ПАТРІАРХЪ-КАТОЛИКОСА
ВСѢХЪ АРМЯНЪ
1914 г. 3/VI

Այս մասին պարտք ունենալով հաղորդել ի գիտութիւն ՎԵՀԱՓԱՌ ՏԵԱՌՆԴ, կատարում եմ ընդ փոյթ, յայտ առնելով միանգամայն, որ Հայ Եկեղեցու Սրբազնակատար ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏԻԴ հոգևոր մասնակցութիւնը այդ հանդիսին, մի նոր առհաւատչեայ է հեռաւոր ազգայիններիս սրտում, նոր կապ հաստատելու ուծացած գաղութիս հետ, իսկ օտարների աչքում մի նոր ապացոյց որ Հայոց Հայրապետները երախտապարտ հոգով են փարուած Հայ ազգի Երախտաւորների յիշատակին, որպիսին է Երջանկայիշատակ Ալէքսանդր Ա. Կայսրը։

Առաջնորդ Թեմին Նոր-Նախիջևանի եւ Բեսսարաբիոյ
Ներսէս Արքեպիսկոպոս

4-ն Յունիսի 1914 ա.
Քիշնև.